

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

1. Համայնքի 2012 թվականի տարեկան բյուջեի կատարողականը՝

2012 թվականի համայնքի բյուջեի վարչական մասով եկամուտների ծախսերի հաշվարկը նախատեսվել է 23908,0 հազար դրամ, որտեղ սեփական եկամուտը կազմում է 5234,4 հազար դրամ: Հավաքագրվել է բյուջե է մուտքագրվել 5335,5 հազար դրամ, որը կազմում է 101,9 %:

Ֆոնդային մասով չեն եղել նախատեսված փաստացի մուտքեր:

Տարեսկզբի մնացորդը եղել է 508,6 հազար դրամ:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան	
		Փաստացի	Տոկոս
1 հողի հարկ	1860,0	1868,1	100,4
2 գույքահարկ	3172,5	3203,0	101,0
3 տեղական տուրք	183,0	195,6	106,9
4 վարձակալական հ/հարկ	18,9	18,9	100,0
5 վարչական տուգանք	0	50,0	
6 դոտացիա	18673,6	18673,6	100,0
7 տարեսկզբի ազատ մնացորդ	508,6	508,6	
ԸՆԴԱՄԵՆԸ	24416,6	24517,8	100,4

ԾԱԽՍԵՐ

- ա) կառ. ապարատ – պլանային 13757,6 հազ. դրամ - փաստացի 13372,6 հազ. դրամ – 97,1%,
- բ) նախադպ. կրթ. - - - - - 8060,0 հազ. դրամ - - - - - 8060,0 հազ. դրամ - 100,0%,
- գ) սոց. պաշտպանություն - - 500,0 հազ. դրամ - - - - - 500,0 հազ. դրամ - 100,0%,
- դ) մշակույթ, սպորտ, կրոն - - - 779,0 հազ. դրամ - - - - - 779,0 հազ. դրամ - 100,0%,
- ե) աղբահանություն - - - - - 1320,0 հազ. դրամ - - - - - 1320,0 հազ. դրամ – 100,0%,

Ընդամենը - - - - - 24416,6 հազ. դրամ, - - - - - 24031,7 հազ. դրամ – 98,4%:

2. 2012 թվականի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 9 նիստ, որից 6 հերթական, 3 արտահերթ, 1՝ նորընտիր ավագանու անդրանիկ նիստ՝ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, որի ընթացքում ընդունվել է ավագանու 46 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 23 որոշում, արձակվել՝ 16 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 171 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 408 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 130 կանանց՝ թոշակառու մայրերի, գյուղապետարանի, մանկապարտեզի, դպրոցի, բուժկետի աշխատողների համար 370,0 հազար դրամով զնվել են նվերներ:
7. Սոցիալական ծրագրերից՝ 500,0 հազար դրամ տրամադրվել է՝
 - 1) «Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ «Լավագույնն իր ուղորտում» ամենամյա մրցույթ-մրցանակաբաշխություն կազմակերպելու համար՝ 100,0 հազար դրամ,
 - 2) համայնքի 8 անապահով ընտանիքների և զին.ծառայողների՝ 330,0 հազար դրամ,
 - 3) մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Հայրենական մեծ պատերազմի միակ վետերանին՝ դրամական օգնություն՝ 30,0 հազար դրամ,
 - 4) պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերությանը՝ 20,0 հազար դրամ,
 - 5) Հայաստան համահայկական հիմնադրամի ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն՝ 20,0 հազար դրամ:
8. Մանկապարտեզի տարեվերջյան հանդեսին դպրոցահասակ 18 երեխաների տրամադրվել են նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրեմական պիտույքներ, որի համար ծախսվել է 108,0 հազար դրամ:
9. Համայնքի մի շարք փողոցների տնամերձերի ոռոգման ջրի համար տեղադրվել է պոմպ՝ սպառման համակարգը էլ.ցանցին միացնելու համար, վճարվել է 278,0 հազար դրամ:
10. Կրտսեր պաշտոն զբաղեցնող 3 համայնքային ծառայողներ մասնակցել են Արմավիրի մարզպետարանում կազմակերպված ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին և ստացել վկայականներ:
11. Գյուղապետարանի աջակցությամբ և բարեգործական հիմունքներով՝

- 1) կառուցվել է 7-րդ փողոցի խմելու ջրի նոր ջրագիծ, որի համար օգտագործվել է 530զժմ խողովակ: Արդյունքում 25 տնտեսություններ ապահովվել են որակյալ խմելու ջրով,
- 2) 1-ին փողոց 2-րդ փակուղում կառուցվել է խմելու ջրի նոր ջրագիծ, որի համար օգտագործվել է 90զժմ խողովակ,
- 3) բնական գազի բաժանորդ է դարձել 10 տնտեսություն, որից 5 տնտեսությունների տրամադրվել են 120զժմ գազի խողովակներ,
- 4) վերանորոգվել է համայնքի մշակույթի տան շենքը, մանկապարտեզի շենքի 2-րդ հարկի մի մասնաճյուղը,
- 5) բնակչության ակտիվ մասնակցությամբ կազմակերպվել է համայնքային միջոցառում՝ նվիրված Սուրբ Ջատկին,
- 6) ասֆալտապատվել են (փոսալցումով) ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները, որի համար ծախսվել է համապատասխանաբար 50խմ և 45 տոննա ասֆալտ,
- 7) բնակիչների օգնությամբ, մասնակիորեն լուծվել է համայնքի գերեզմանատան ռոզման ջրի հարցը: Այդ նպատակի համար օգտագործվել է 1000զժմ խողովակ:
12. Համայնքի 6/1 փողոցի խմելու ջրի նոր ջրագծի համար գնվել է 150զժմ խողովակ, որի համար ծախսվել է 86,0 հազար դրամ:
13. Գնվել է նոր համակարգիչ 151,6 հազար դրամ գումարով:
14. Համայնքում կազմակերպվել է ամանորյա միջոցառում, որի համար տրամադրվել 122,0 հազար դրամ գումար. մանկապարտեզ հաճախող երեխաների համար գնվել են նվերներ՝ 75,0 հազար դրամ գումարով:
15. Գյուղապետարանի 3 աշխատակիցներ գործուղվել են ք. Երևան՝ մասնակցելու «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված դասընթացներին:
16. Կիրառվել է դրամական խրախուսանք՝ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների նկատմամբ:
17. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
18. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. Համայնքային ճանապարհների վերանորոգում:
2. Գերեզմանատան ցանկապատում:
3. Մանկապարտեզի շենքի 2-րդ հարկի մի մասնաշենքի վերանորոգում:
4. Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:

Այգեկ համայնքի ղեկավար



Վ. Աբրահամյան

2013 թվականի հունվարի 17
գ. Այգեկ